ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

12 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Ալիխան Համեյանը, Ջամալ Միրզոյանը, Սերժիկ Մուրադովը, Անզոր Շաբոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վազիր Ավդալյանը

Լսեցին

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՉԵԿ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2023 թվականի վարձատրությունը սահմանել 340000 (երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3/

Լսեցին

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՉԵԿ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի դ) կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ կետով և 14-րդ հոդվածով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Սահմանել Արագածոտն մարզի Ալագյազ համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարի 2023 թվականի համար հետևյալ դրույքաչափերը

1)Կենցաղային աղբի համար փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 դրամ:
2)Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 դրամ:
3)Առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 60 դրամ:
4)Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 դրամ:
5)կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 5 դրամ:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6/

Լսեցին
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջով և քննարկելով Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Արագածոտն մարզի Ալագյազի համայնքապետարանի 2023 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածները՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի

պահանջներով և հաշվի առնելով հանրային բաց քննարկումները՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեն՝ եկամտային 175640900 (մեկ հարյուր յոթանասունհինգ միլիոն վեց հարյուր քառասուն հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, 93728800 (իննսուներեք միլիոն յոթ հարյուր քսանութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ 2023 թվականի տարեսկզբի մնացորդ և ծախսային 269369700 (Երկու հարյուր վաթսունինը միլիոն երեք հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2/

Լսեցին

ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ /ՏԱՊ/ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ 1-ին մասի 4.1-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետով և 82.1-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ալագյազ համայնքի 2023թ տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ ծրագրերի ցանկն ընդգրկել համայնքի 2023 թվականի գնման պլանում՝ այն մինչև փետրվարի 1-ը սահմանված կարգով հրապարակելու համար:
3.Թույլատրել համայնքի ղեկավարին՝
ա) ծրագրի առանձին հատվածների իրականացման օբյեկտիվ անհնարինության կամ խնայողությունների դեպքում նախատեսված գումարն ուղղել առաջնահերթ և հրատապ լուծում պահանջող այլ խնդիրների լուծմանը:
բ) խիստ անհրաժեշտության առաջացման և ֆինանսական հնարավորության դեպքում ծրագրերի համար նախատեսված գումարի մինչև 20 %-ի չափով կատարելու լրացուցիչ հատկացումներ:
4.Համայնքի ղեկավարին՝ ապահովել կապիտալ ծրագրերի նախագծային - նախահաշվային փաստաթղթերի կազմումը, օրենքով սահմանված կարգով կազմակերպել աշխատանքների գնման գործընթացները և ժամանակին ապահովել ծրագրերի կատարումը:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7/

Լսեցին

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԻՐ ԱՎԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգի 17-րդ մասի 1-ին կետով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում առաջադրել համայնքի ավագանու հետևյալ անդամներին՝
1.1«Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմին» կազմում՝ Ռեզո Մախմուդով,
1.2«Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցան մարմին» կազմում՝ Շիրալի Չոլայան,

1.3«Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմին» կազմում՝ Անզոր Շաբոյան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8/

Լսեցին
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԻՐ ԱՎԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգի 64-րդ մասի 4-րդ կետով՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Ալագյազ համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմին», «Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցան մարմին» և «Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմին» խորհրադակցական մարմինների կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 12-ի N 1 հերթական նիստի օրակարգը.
1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին,
2.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի 2023 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին,
3.Արագածոտնի մարզի Ալագյազի համայնքապետարանի 2023 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին,
4.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում 2023թ. տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,
5.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում 2023 թվականի աղբահանությունը կազմակերպելու և աղբահանության վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,
6.Ալագյազ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/ հաստատելու մասին,
7.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններում համայնքի ավագանու անդամի թեկնածուներին առաջադրելու մասին,

8.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կազմը հաստատելու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1/

Ավագանու անդամներ

ՖԱՅԶՈ ԱԼԻՅԱՆ

ՋԱԼԻԼ ԽՈԽՈՅԱՆ

ՄԱՐԱՏ ԿՆՅԱԶՅԱՆ

ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ _____

Նիստն արձանագրեց՝ Վազիր Ավդալյանը _____